

ԱՌԻԻԾՐ ԵՒ ՄԱՐԴԸ



Զօրաւոր առիւծ մը, որ նստած էր ժայռի մը վրայ, կը տեսնէ որ գազանները սարսափահար կը վազէին: Առիւծը կը հարցնէ, թէ ինչո՞ւ կը փախէին եւ որմէ՞ կը վախնային:

--Դուն ալ փախիր,- կ'ըսեն,- որովհետեւ մարդը կու գայ:

--Ո՞վ է մարդը,- կը հարցնէ Առիւծը,- եւ ի՞նչ է անոր ուժը, որ կը փախիք անկէ:

--Կու գայ եւ քեզի ալ կը վնասէ,- կ'ըսեն:

Իր ուժերուն վստահ՝ Առիւծը կը մնայ իր տեղը: Եւ ահա կու գայ հողագործ մարդ մը:

--Եկուր կռուինք,- կ'ըսէ հպարտ Առիւծը:

--Շատ լաւ,- կ'ըսէ մարդը,- բայց քու զենքերդ հետդ են, մինչ իմիններս տունն են: Քեզ կապեմ, որպէսզի չփախիս, իսկ ես երթամ եւ բերեմ զենքերս, որպէսզի կռուինք:



Առիւծը կ'ըսէ.

--Երդում ըրէ, որ պիտի գաս եւ ես կ'ընդունիմ ըսածդ:

Մարդը երդում կ'ընէ եւ Առիւծը կը համաձայնի կապուիլ:
Մարդը կը հանէ պարանը եւ Առիւծը պինդ* կը կապէ կաղնիի ծառին, ապա ծառէն կը կտրէ հաստ ճիւղ մը եւ կը սկսի զարնել Առիւծին:

Առիւծը կը գոչէ.

--Աւելի զօրաւոր եւ անխնայ զարկ կողերուս, որովհետեւ այս խելքիս միայն այսպիսի ծեծ կը վայելէ:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

ԻՆՉՊԷՍ ՉԱՓԵՍ, ԱՅՆՊԷՍ ԱԼ ԿԸ ՉԱՓՈՒԻՄ



Տղայ մը օր մը կը զայրանայ իր ծերացած հօրմէն, զայն կ'առնէ ուսին, կը տանի անտառ մը, հոն կը ձգէ ու տուն կը դառնայ:

Տարիներ ետք կ'ամուսնանայ, որդի մը կ'ունենայ, կը խնամէ ու կը մեծցնէ զայն: Սակայն, այս տղան ալ հօրը պէս երախտամոռ* կ'ըլլայ:

Օր մըն ալ, երբ ասոր ալ սիրտը կը նեղուի, կ'առնէ հայրը ուսին ու սարն ի վեր կը բարձրանայ:

--Տղա՛ս, զիս հոս ձգէ ու ե՛տ գնա,-- կըսէ հայրը:

--Իսկ ինչո՞ւ ճիշդ հոս,-- կը հարցնէ տղան:

--Ես հայրս մինչեւ այս ծառն եմ բերած,-- կը պատասխանէ հայրը հոգոց հանելով*:

Կազմող եւ մշակող՝ Արմէն Սարգիսեան

Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց՝ Արթուր Անդրանիկեան

ՈՒՆՏԱՒՈՐ ԱՂՈՒԷՍԸ



Օր մը Աղուեսը կ'ըսէ Աքլորին.

-Ի՛նչ աղուոր ու անոյշ կ'երգես, ո՛վ Աքլորիկ: Երանի՛ գիշեր-ցերեկ հոս նստէի ու անոյշ ձայնդ լսէի: Ափսո՛ս, որ վաղուրնէ պիտի զրկուիմ քեզ լսելու հաճոյքէն. մեղաւորս Սուրբ Կարապետ ուխտի պիտի երթայ: Միրունի՛ կ'Աքլոր, կը խնդրեմ զիս հաւնոց առաջնորդէ, որպէսզի մեղքերուս համար թողութիւն խնդրեմ հաւերէն:

Այս քաղցր խօսքերէն Աքլորին սիրտը կը կակուղնայ ու ան կ'ըսէ.

-Երթանք, քեզի ցոյց տամ հաւնոցը:



Աղուէսը Աքլորին ետեւէն կը մտնէ հաւաքուն, կը խեղդէ բոլոր հաւերը ու կ'ուտէ զանոնք, յետոյ ալ կ'ուտէ Աքլորը անոր ըսելով.

-Իմ սիրունի՛կ Աքլոր, գիտե՞ս, թէ ի՛նչ դժուար պիտի ըլլար Մուրք Կարապետ անօթի փորով ուխտի երթալը...

Կազմող եւ մշակող՝ Արմէն Սարգիսեան
Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց՝ Արթուր Անդրանիկեան

ՏՈ՛ՒՐ ՀԱ ՏՈ՛ՒՐ



Մարդ մը անընդհատ կ'աղօթէր Աստուծոյ ու կը խնդրէր.

-Աստուա՛ծ, գոնէ անգամ մըն ալ ինծի՛ տուր, ի՞նչ կ'ըլլայ: Տո՛ւր, որպէսզի քիչ մըն ալ ես մարդավարի* ապրիմ:

Աստուծոյ հրեշտակներէն մէկուն խիղճը կը տանջէ: Ան կ'երթայ Բարձրեալին* քով ու կ'ըսէ.

-Տէ՛ր Աստուած, ոչ ոք խնդրանքով այդքան կ'աղօթէ Քեզի: Մեղք է ան: Անգամ մըն ալ այդ Մարդուն տուր:

-Ըսելիք չունիմ, կ'օգնեմ, կու տամ: Բայց բազկաթռօնի վրայ երկնցեր է ու կ'ըսէ՛ տո՛ւր հա տո՛ւր: Նման մէկուն ինչպէ՛ս տամ: Անիրաւր գոնէ տեղէն վեր ելլեր, գործ մը ըներ, ես ալ օգնէի՛ տայի...:

Կազմող եւ մշակող՝ Արմէն Սարգիսեան
Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց՝ Արթուր Անդրանիկեան

ԱԳԱՀ ՄԱՐԴԸ



Ագահ ու աչքը ծակ մարդ մը Աստուծմէ հետեւեալը կը խնդրէ.

- Տէ՛ր Աստուած, այնպէս ըրէ, որ ի՛նչ բանի որ դպչիմ՝ ոսկի դառնայ:

Աստուած կը կատարէ անոր ուզածը: Ագահը դանակ կ'առնէ որ հաց կտրէ, սակայն ո՛չ միայն դանակը ոսկի կը դառնայ, այլեւ՝ հացը:

Լեղապատառ*՝ կ'երթայ ջուր խմելու. գաւաթին հետ... ջուրն ալ ոսկի կը դառնայ: Ինչի որ դպչի՝ ոսկիի կը վերածուի:


- Վա՛յ, Աստուած իմ, այս ի՞նչ փորձանք բերիր գլխուս, չե՛մ ուզեր, ա՛լ ոսկի չեմ ուզեր, միայն կը խնդրեմ, որ լաւութիւնդ ետ վերցնես...:

Աստուած ագահ մարդուն աղաչանք-պաղատանքին չ'արձագանգեր, եւ ան ոսկիի մէջ թաղուած, այնքա՛ն անօթի-ծարաւ կը մնայ, որ քանի մը օրէն կը մեռնի...:

Կազմող եւ մշակող՝ Արմէն Սարգիսեան

Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց՝ Արթուր Անդրանիկեան

ՄՈՒԿԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ



Անգամ մը մուկերը ժողովի կը հաւաքուին խորհելու, թէ ի՞նչ ընեն կատուին յարձակումներէն զգուշանալու համար:

-Եկէ՛ք կատուին վիզէն զանգակ մը կախենք: Կատուն երեւալուն պէս, զանգակը ձայն կը հանէ, մենք ալ կը լսենք ու կը փախչինք, - կ'ըսէ մուկ մը:

-Ի՛նչ հրաշալի բան խորհեցանք,- կ'ըսեն մուկերը:

Ուրիշ մուկ մըն ալ թէ՛

- Հրաշալի ըլլալու հրաշալի է, բայց թող մէջտեղ ելլէ ան, որ կրնայ զանգակը տանիլ ու կատուին վիզէն կախել...

Բոլորը իրարու կը նային ու ...քար լռութիւն կը տիրէ...:

ԵՐԵՔ ՀԱՐՈՒՍՏ



Երեք հարուստ կը վիճին ու վեճը հարթելու* համար կերթան Խիկար Իմաստունին քով.

--Մենք եկած ենք գիտնալու, թե մեզմէ ո՞վ հարուստ է:

--Դու՛ն խօսիր,-- կը դիմէ Իմաստունը առաջին մարդուն:

--Ես ոսկիի ու արծաթի, տուն ու տեղի, ունեցուածքի եւ արտ ու դաշտի տէր եմ, հարստութեանս չափ ու սահման չկայ:

--Հիմա ալ դո՛ւն խօսէ տեսնենք,--կը դիմէ երկրորդին:

--Ես թէեւ թագաւորին զօրապետն եմ, բայց իրմէ երեք անգամ աւելի հարուստ եմ:

--Իսկ դո՛ւն ինչ կըրես,-- կը դիմէ Իմաստունը երրորդին:

--Ի՞նչ ըսեմ: Ես ո՛չ պաշտօն ունիմ, ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ ալ արտ ու դաշտ: Ես գիտուն մարդ մըն եմ, ունեցած-չունեցածս գլխուս մէջն է:

Երեքը լսելէն յետոյ Խիկար Իմաստուն կըրսէ.

--Ձեզմէ ամէնէն հարուստը գիտունն է. անոր հարստութիւնը մնայուն ու անվերջանալի է եւ ոչ ոք կրնայ զայն խլել անկէ...: